

Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
24-Ի ԹԻՎ 1-Ն, 2-Ա, 3-Ն ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 1-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 1-Ն (համայնքի ավագանու) որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում, հետևաբար որոշման հերթական համարից հետո «Ն» տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա:

Որոշման բովանդակության մեջ «ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի» բառից և թվից հետո նշված « ԹԻՎ 2» բառերը փոխարինել « ԹԻՎ 1» բառերով:

Որոշմամբ հաստատված համայնքի ավագանու նիստի օրակարգում ընդգրկված չէ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

Թիվ 2-Ա որոշումը պարունակում է նորմատիվ բնույթի դրույթներ: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով: Հետևաբար, որոշման հերթական համարից հետո նշված «Ա» տառը փոխարինել «Ն» տառով:

Որոշման բովանդակության մեջ փոփոխվող իրավական ակտի հերթական համարը սխալ է գրառված:

Որոշման 2-րդ կետի «ա» ենթակետում «չորս միլիոն մեկ հարյուր» բառերից հետո նշված «վեց հազար» բառերից հետո լրացնել «հինգ հարյուր» բառերը: Որոշմամբ կատարված գումարային փոփոխություններով խախտվել է բյուջեի հավասարակշռությունը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը: Բացի այդ, որոշման դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 3-Ն որոշման նախաբանում կատարված հղումները սխալ են: Անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ և 8-րդ մասերին:

Որոշմանը կից ներկայացված հավելվածը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթներին: Բացի այդ, հավելվածում համայնքի բյուջեի ծախսերը, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ներկայացված չեն:

Որոշմամբ հաստատվել է համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով

սահմանված կարգով: Սակայն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվել է միայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
04.03.2020թ.